ՈԱԱԿ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE FOUNDATION

ՀՀ, ք. Երևան, Օրբելի եղբ. փ. 22, info@anqa.am; www.anqa.am, Ֆաքս՝ (+374 10) 22 91 48; Հեռ. ՝ (+374 10) 22 91 45, 22 91 46,
Orbeli Str., Yerevan, Republic of Armenia; info@anqa.am; www.anqa.am, Fax՝(+374 10) 22 91 48; Tel: (+374 10) 22 91 45, 22 91 46

ՈՐՈՇՈՒՄ

Կրթության որակի հսկողության և կարիերայի զարգացման /ԱԿԿՈՐԿ/ գործակալության միջազգային հավատարմագրման խորհրդի կողմից ««Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ին շնորհված ինստիտուցիոնալ և «Բուժական գործ» մասնագիտության ծրագրային հավատարմագրերը ՀՀ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցելու մասին

15.10.2019 թ. **N 37**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 978-Ն որոշման 2-րդ գլխի 10-րդ և 3-րդ գլխի 19-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ Կրթության որակի հսկողության և կարիերայի զարգացման /ԱԿԿՈՐԿ/ գործակալությունը գրանցված է Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) և հանդիսանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ, ինչպես նաև այն, որ համալսարանը սահմանված ժամկետում ՈԱԱԿ-ին տեղեկացրել է օտարերկրյա կազմակերպության կողմից հավատարմագրման գործընթացի մեկնարկի մասին.

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցել.
   - Կրթության որակի հսկողության և կարիերայի զարգացման /ԱԿԿՈՐԿ/ գործակալության միջազգային հավատարմագրման խորհրդի 2019թ. սեպտեմբերի 23-ի N 2019-0923 որոշումը՝ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի կրթության որակի կառավարման համակարգը 4 տարի ժամկետով՝ պայմաններով, հավատարամգրելու մասին,
   - Կրթության որակի հսկողության և կարիերայի զարգացման /ԱԿԿՈՐԿ/ գործակալության միջազգային հավատարմագրման խորհրդի 2019թ. սեպտեմբերի 30-ի N 2019-0930 որոշումը՝ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի «Բուժական գործ» կրթական ծրագիրը 1 տարի ժամկետով պայմանականորեն հավատարմագրելու մասին:

Տնօրեն **Ռ.Թոփչյան**